ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042, ՀՀ, Հեռ.՝ (37410) 28-07-22, էլ. փոստ՝ gdca@gdca.am

N 1.1/12,1/1210-20

«13» 05 2020 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի Շուշան Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2020 թվականի մայիսի 6-ի № 345-43 հարցմանը՝ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի աշխատավարձի, պարգևավճարի և մայրության նպաստի չափի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պաշտոնավարման ամբողջ ժամանակահատվածում պարգևատրումների քանակի, պարգևավճարի չափի, աշխատավարձի չափի և ստացած մայրության նպաստի չափի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սահմանում է, որ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են, ինչպես նաև նույն օրենքի 134-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները՝ աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անձնական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկատվությունն է, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը

սահմանում է, որ անձնական տվյալները մշակելու հիման վրա տվյալների սուբյեկտի համար իրավական հետևանքներ առաջացնող կամ այլ կերպ նրա իրավունքներն ու օրինական շահերին առնչվող որոշումներն ընդունվում են սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում: Պահանջվող տեղեկատվությունը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով թույլ տալ անձի ինքնության նույնականացում (դրա համար անհրաժեշտ է անձի (տվյալների սուբյեկտի) համաձայնությունը):

Միաժամանակ հայտնում ենք, որ պարգևավճարները, աշխատավարձերը և ստացած մայրության նպաստը հաշվարկվել են օրենսդրությամբ սահմանված կարգով և չափորոշիչներին համապատասխան:

Հարգանքով՝

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ

5/13/2020

X

VERIFIED OCSP 13.05.2020 16:41:08 GMT+4

Signed by: POGHOSYAN GALUST 1607790106

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ • REPUBLIC OF ARMENIA CIVIL AVIATION COMMITTEE •
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐ է
ELECTRONIC SIGNATURE IS VALID

Կատարող՝ Ա.Սարգսյան

Zin 060-464-279